

XV. Տրված է $f(x) = \frac{1-x}{x+3}$ ֆունկցիան:

59. Ֆունկցիան զույգ է:

60. -3 -ը պատկանում է ֆունկցիայի արժեքների տիրույթին:

61. $x = -3$ -ը ֆունկցիայի կրիտիկական կետ է:

62. Իր որոշման տիրույթում ֆունկցիան նվազող է:

63. $(1; +\infty)$ -ը ֆունկցիայի նշանապահպանման միջակայք է:

64. $\frac{1}{3}$ -ը $g(x) = f(|x|)$ ֆունկցիայի էքստրեմում է:

XVI. Տրված է a պարամետրով $\sqrt{ax+1} = x$ հավասարումը:

65. Երբ $a = 0$, հավասարումն արմատ չունի:

66. Երբ $a = 1$, հավասարումն ունի ճիշտ երկու արմատ:

67. Հավասարումը համարժեք է $ax+1 = x^2$ հավասարմանը:

68. Ցանկացած a -ի դեպքում հավասարումն ունի ճիշտ մեկ արմատ:

69. Ցանկացած a -ի դեպքում հավասարման արմատներն են՝ $x = \frac{a \pm \sqrt{a^2+4}}{2}$:

70. Չկա a -ի այնպիսի արժեք, որ տրված հավասարումն ունենա ռացիոնալ արմատ:

Փոփոխականների թիվը